Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Պ-873-16.10.2015,22.10.2015-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-264 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի վերջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«***էկոլոգիական մշակույթ***՝ մարդու և բնության ներդաշնակ փոխազդեցության զարգացման մակարդակ, որը բնութագրվում է մարդկության կողմից էկոլոգիական հիմնախնդիրների առաջնահերթ լուծման գիտակցությամբ ու գիտական հիմնավորվածությամբ, ինչը նպաստում է առողջ ապրելակերպին, սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը, երկրի և յուրաքանչյուր անձի էկոլոգիական անվտանգությանը, սերունդների համերաշխությանը՝ օգտագործելով բնության հնարավորությունները»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 4. Պետական քաղաքականության սկզբունքները էկոլոգիական անընդմեջ կրթության և դաստիարակության ոլորտներում

էկոլոգիական անընդմեջ կրթության և դաստիարակության պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

ա) քաղաքացու էկոլոգիական գիտելիքների անհրաժեշտ նվազագույնը ստանալու պետական երաշխիքի ապահովումը.

բ) էկոլոգիական կրթության և դաստիարակության պարտադիր լինելը կրթական համակարգի բոլոր մակարդակներում, դրա շարունակականությունը և համալիր բնույթը.

գ) էկոլոգիական կրթության և դաստիարակության հարցերի ընդգրկումը էկոլոգիական նպատակային և ճյուղային բոլոր պետական ծրագրերում.

դ) էկոլոգիական կրթության և դաստիարակության ուղղվածությունը շրջակա բնական միջավայրի պահպանության խնդիրների լուծման ընթացքում.

ե) պետական քաղաքականության իրականացումն էկոլոգիական կրթության և դաստիարակության հարցերում.

զ) մշակույթների ու ավանդույթների բազմաձևության ապահովումը, ազգային կոլորիտի պահպանումը՝ որպես էթնոէկոլոգիական համակարգ.

է) միասնական՝ բնագիտական ու մշակութաբանական փոխադարձաբար կապված արժեքների ձևավորումը մարդու և բնության համար:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ

Հ./Հ	Փոփոխվող հոդվածը, որին վերաբերում է առաջարկությունը	Փոփոխվող հոդվածի նախնական տեքստը	Փոփոխվող հոդվածի նոր տեքստը	Առաջարկությունը	Առաջարկության հեղինակը	Եզրակացությունը
1.	հ.1	«էկոլոգիական մշակույթ՝ մարդու և բնության ներդաշնակ փոխազդեցության զարգացման փուլ, որը բնութագրվում է մարդկության կողմից էկոլոգիական հիմնախնդիրների առաջնահերթ լուծման գիտակցությամբ ու գիտական հիմնավորվածությամբ, ինչը նպաստում է առողջ ապրելակերպին, սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը, երկրի և յուրաքանչյուր անձի էկոլոգիական անվտանգությանը»:	«էկոլոգիական մշակույթ՝ մարդու և բնության ներդաշնակ փոխազդեցության զարգաց-ման մակարդակ, որը բնութագրվում է մարդկության կողմից էկոլոգիական հիմնախնդիրների առաջնա-հերթ լուծման գիտակցությամբ ու գիտական հիմնավոր-վածությամբ, ինչը նպաստում է առողջ ապրելակերպին, սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը, երկրի և յուրաքանչյուր անձի էկոլոգիական անվտան-գությանը, սերունդների համերաշխությանը՝ օգտա-գործելով բնության հնարավորությունները»:	1.Առաջարկվել է «փուլ» բառը փոխարինել «մակարդակ» բառով 2.Առաջարկվել է հոդվածում է ավելացնել «սերունդների համերաշխությանը՝ օգտագործելով բնության հնարա-վորությունները» բառակապակցությունը	1. ՀՀ Կառավարություն 2. ԱԺ պատգամավոր Խոսրով Հարությունյան	1.Ընդունվել է 2.Ընդունվել է
2.	հ.4	գ/ և դ/ կետերը տեխնիկական պատճառով ներառված չեն եղել օրենքի նախագծի նախնական տարբերակում, որի արդյունքում խախտվել է ամբողջական հոդվածի տառերի այբբենական կարգը	գ/ և դ/ կետերը ավելացվել են հոդվածում հետևյալ խմբագրությամբ՝ գ) էկոլոգիական կրթության և դաստիարակության հարցերի ընդգրկումը էկոլոգիական նպատակային և ճյուղային բոլոր պետական ծրագրերում, դ) էկոլոգիական կրթության և դաստիարակության ուղղվածությունը շրջակա բնական միջավայրի պահպանության խնդիրների լուծման ընթացքում,		ՀՀ Կառավարություն	Ընդունվել և ճշգրտվել է